ԱԿՆԻ ԿԱԶԱՅԻ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ
(XIX դ. վերջ - XX դ. սկիզբ)

ՍԱՀԱԿՅԱՆ Ա. Գ.

Արաբկիրի սանջակը գտնվում է Փոքր Հայքի հարավում՝ Եփրատ գետի աջ ափին: XVII դ. կցված է եղել Սեբաստիայի էյալեթին, այնուհետև անցել է Մալաթիայի իրավասության ներքո, ավելի ուշ՝ 1880-ական թթ., մտցվել է Խաղերդի (Մամուրեթ-ուլ-Ազիզ) վիլայեթի մեջ: XIX դ. Վերջին և XX դ. սկզբին սանջակը բաժանված էր Արաբկիր (կենտրոնական), Ակն և Պոտուրկե կազաների:

Ակնի կազան XIX դ. վերջին և XX դ. սկզբին Արաբկիրի սանջակի հյուսիսային գավառակն էր: Հյուսիսից սահմանակից էր Սեբաստիայի և Կարինի վիլայեթներին, արևելքից՝ Դերսիմի սանջակին, հարավից՝ Արաբկիրի կազային, արևմուտքից՝ Սեբաստիայի վիլայեթին: Կազայի կենտրոնը Ակնքաղաքն էր, որը գտնվում է Եփրատ գետի աջ ափին: Քաղաքը բաժանված էր 2 գլխավոր թաղերի՝ Վերի և Վարի, որոնք միմյանցից բաժանված էին լայն առվով: Թե՛ Վերի և թե՛ Վարի թաղերը բաղկացած էին 15-20 տնից, որոնք միմյանցից բաժանված էին պարտեզներով: Դեռ 1878 թ. Ակն քաղաքում բնակվում էր 1008 հայ տուն՝ 5284 շունչ, 50 շունչ բողոքական դավանանքի հայ, 4310 շունչ թուրք [1]: Մեր կարծիքով, ուռճացված են Մ. Ծոցիկյանի տվյալները, որոնց համաձայն՝ Ակն քաղաքի բնակչությունը XIX դ. վերջին կազմում էր 20.000 մարդ, որոնցից 10.000-ը հայեր էին, մնացածը՝ թուրքեր, և փոքր մասը՝ հույներ[2]:

Բողոքականները մուտք էին գործել Ակն 1870-ական թթ. սկզբին[3]: Արդեն 1885 թ. Ակն քաղաքում բողոքականների թիվը հասնում էր 70 տան[4]: Ցավոք, 1880-ական թթ. արտագաղթը և 1895-1896 թթ. Կոտոր ածները կտրուկ ազդեցին հայ ազգաԿակչության ընդհանուր թվաքանակի վրա: XIX դ. ընթացքում Ակնից Կ. Պոլիս գաղթածների թիվը կազմում էր մոտ 100 տուն: Ակնից 40-50 տուն գաղթել էին նաև Խարբերդ,իսկ այլ վայրեր՝ 5-10 տուն[5]: 1883-1884 թթ. մարդահամարի համաձայն՝ վերջին 30 տարվա ընթացքում Ակնից գաղթածների թիվը հասնում էր 400-500 շնչի[6]: Այս արտագաղթի հիմնական պատճառը սոցիալ-տնտեսական ծանր դրությունն էր, որում հայտնվել էին ակնցիք: Բնակչության արտագաղթի և Ակն քաղաքում տիրող ծանր սոցիալ-տնտեսական դրու-

[1] ՀՀ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ԳԱԹ), Թորոս Ազատյանի ֆ., բաժ. 3, գ. 35, թ. 1, տե՛ս նաև Ազատյան Թ., Ակն, ա. տ. նթ., էջ 9:
[2] Ծոցիկյան Մ., Արևմտահայ աշխարհ, Նյու Յորք, 1947, էջ 11:
[3] ԳԱԹ, Թորոս Ազատյանի ֆ., բաժ. 3, գ. 35, թ. 1, տե՛ս նաև Ազատյան Թ., Ակն, ա. տ. և թ., էջ 35:
[4] Մասիս, Կ. Պոլիս, 20.IV.1885:
[5] Քեչյան Ա., Ակն և Ակնցիք, Փարիզ, 1952, էջ 147:

[6] 6 Տե՛ս նույն տեղում:

թյան մասին է վկայում Գարեգին Սրվանձտյանցը, որն անձամբ շրջել էր Արևմտյան Հայաստանի շատ քաղաքներում և գյուղերում: Նա նշում է. «Ակն ո՛չ առևտուր ունի և ո՛չ երկրագործություն ունի, ասոր համար բոլոր Ակնածինները սփռյալ են այլ և այլ քաղաքներ ու աշխարհները, շատերը անդարձ գաղթականությամբ, բայց շատերուն ալ մեծածախ տուն եր և Ակնա ջուրն ու օդը չէր ձգած մեկնել, ուր որ շրջեցա Ակնցիներու պատահեցա»[7]:

Այս ժողովրդագրական տեղաշարժերով հանդերձ՝ 1884 թ. Ակն քաղաքի բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 10.000 մարդ, որի կեսից քիչ ավելին՝ հայ, և մնացածը՝ թուրք[8]: Պարզ է դառնում, որ ճշմարտությունից հեռու է Խարբերդ նահանգի համար 1887-1888 թթ. Պատրաստված սալնամեն (պաշտոնական տարեգիրքը), որն իր աշխատության մեջ վկայակոչում է Առաքել Քեչյանը[9]: Նշվում է, որ ամբողջ Ակնի կազայում նշված ժամանակահատվածում կար 8233 տուն բնակչություն. 12.700 շունչ՝ մահմեդական, 5507՝ ոչ մահմեդական: Այս հայաշատ քաղաքը 1896 թ. ենթարկվեց համիդեական կոտորածի, որի հետևանքով, կազայի 3000 զոհից 2000-ը բաժին էր ընկնում Ակն քաղաքին[10]: Պետք է ենթադրել, որ Ակն քաղաքի հայ բնակչության ծնելիության ցուցանիշն այնքան էլ բարձր չի եղել, քանի որ, այս ամենով հանդերձ, 1914 թ. Հայ բնակչության թիվը հասնում էր 7720 շնչի (1300 տուն), մինչդեռ թուրքերինը 6000 էր[11]:

Բացի այս հայաշատ կենտրոնից, հայերը բնակություն էին հաստատել նաև մի շարք գյուղերում և գյուղաքաղաքներում:

Ակնի կազայի հայաբնակ գյուղերը հիմնականում մտնում էին Աղն նահիեի (գյուղախմբի) մեջ: Կենտրոնն Աղն գյուղաքաղաքն էր, որն անվանվում էր նաև Վաղավեր: Վերջինը գտնվում է Ակնից հարավ-արևելք,Եփրատ գետի աջ ափին: 1896 թ., նախքան համիդեական կոտորածները,Աղնը ուներ 80 տուն՝ 500 շունչ հայ բնակչություն[12]: Կոտորածների և արտագաղթի հետևանքով XX դ. սկզբին հայ բնակչությունը ոչ միայն չաճեց, այլև նվազեց: 1914 թ. հայերն այստեղ ընդամենը 52 տուն էին՝ 319 շունչ[13]: Փաստորեն, 1896-1914 թթ. ընթացքում հայերի թիվն այստեղ նվազել էր 28 տնով:

Այս նահիեի գյուղերն իրենց աշխարհագրական դիրքով բաժանվում էին 3 խմբի: Գյուղերի առաջին խումբը՝ Նարվեր, Ապուշեղ, Կամրկապ, Մաշկերտ, Սաղմկա, Կարուշլա, գտնվում էին Ակն քաղաքի մոտ, մասնավորապես նրա հարավային մասում, երկրորդ խումբը՝ Լիճք, Շրզու, Վանք,

---

[7] Սրվանձտյանց Գ., *Երկեր, հ. Բ, Ե., 1982, էջ 277:*

[8] Ճանիկյան Յ.Կ., *Հնություններ Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 32:*

[9] Քեչյան Ա., *նշվ.աշխ., էջ 35:*

[10] **Kevorkian Raymond H., Paboudjian Paul B.,** *Les Armeniens dans l'empire Ottoman la veille du Genocide, Paris, 1992, էջ 379, տե՛ս նաև* Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականության և իր հոտին ադետալի 1915 տարիին, Նյու Յորք, 1985, էջ 245:*

[11] **Kevorkian Raymond H., Paboudjian Paul B.,** *նշվ. աշխ., էջ 379:*

[12] *ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժ. 3, գ.37, թ.1:*

[13] **Kevorkian Raymond H., Paboudjian Paul B.,** *նշվ.աշխ., էջ 380, տե՛ս նաև* Թեոդիկ, *նշվ. աշխ., էջ 237:*

Զորակ, Մուշաղկա, Վաղաշեն, Բինկյան գյուղերը, Եփրատ գետի ձախ ափին էր, իսկ երրրորդ խումբը՝ Ծագ, Էինեցիկ, Ծապլվար, Քուշնա,Կռանի, Խոռոջ, Հասկնի գյուղերը՝ Ոսկեգետակ գետի ձախ և աջ ափերին:
Նարվեր գյուղը 1878 թ. ուներ 32 տուն՝ 174 շունչ հայ և 76 շունչ թուրք բնակչություն1[14]: Պետք է ենթադրել, որ 1878-1885 թթ. Ընթացքում եղել են բնակչության լուրջ տեղաշարժեր, քանի որ 1885 թ. Հայերը 25 տուն էին[15]: Թեև տեղաշարժերը և 1895-1896 թթ. ջարդերը զգալիոր են ազդեցին Նարվեր գյուղի հայ µYակչության ընդհանուր թվի վրա, բայց 1914 թ. գյուղն ուներ 38 տուն՝ 207 շունչ հայ և 92 շունչ թուրք բնակչություն[16]: Ապուշեղն Ակնի հարավային գյուղերից ամենամեծն էր: Դեռ 1878 թ. ուներ 180 տուն՝ 1000 շունչ հայ, 938 շունչ թուրք բնակչություն[17]: Ըստ 1880 թ. վիճակագրության՝ գյուղը 1066 շունչ հայ բնակչություն ուներ[18]: Հետևելով գյուղի բնակչության աճին՝ պետք է նկատենք, որ XX դ. սկզբին հայերի թիվն այստեղ մեծացել էր՝ 1914 թ. հասնելով 320 տան՝ 1920 շնչի[19]:
Ակնի հարավային գյուղերից էր նաև Մաշկերտը: XIX դ. սկզբին գյուղն ունեցել է 250 տուն հայ բնակչություն[20]: Հետագայում բնակչության ստվար հատվածը գաղթում է Հալեպ և այլ վայրեր՝ պանդխտության, և այդ պատճառով, 1889 թ. նրանց թիվը կազմում էր ընդամենը 85-90 տուն[21]: Պետք է ենթադրել, որ այդ գաղթը շարունակվել է նաև XX դ. սկզբին, քանի որ 1914 թ. Մաշկերտում կար 67 տուն՝ 496 շունչ հայ բնակչություն[22]: 1895-1996 թթ. կոտորածները ևս խեղաթյուրեցին գյուղի ժողովրդագրական նկարագիրը: Ի պատիվ մաշկերտցիների՝ նշենք, որ զոհերի թիվն այդ կոտորածի ընթացքում կարող էր շատ ավելի մեծ լիներ, եթե չլիներ հայտնի քաղաքական գործիչ Արմեն Ճանճիկյանի գլխավորությամբ կազմակերպված ինքնապաշտպանությունը[23]: Փաստորեն, 25 տարվա ընթացքում հայ բնակչությունը նվազել էր մոտ 20 տնով:
Կամրկապ գյուղում ևս XIX դ. վերջին բնակություն հաստատած հայերը թվաքանակով երակշռում էին թուրքերին: 1872 թ. գյուղն ուներ 160 տուն հայ բնակիչ[24], իսկ 1878 թ. այստեղ բնակվում էին 808 շունչ հայ (170 տուն) և 212 շունչ թուրք բնակչություն[25]: XIX դ. վերջին ժողովրդագրական տեղաշարժերն այս գյուղում ևս տեղ են գտել: 1880 թ. և

---

[14] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժ. 3, գ. 35, թ. 3:
[15] Ճանիկյան Յ. Կ., նշվ. աշխ., էջ 51:
[16] **Kevorkian Raymond H., Paboudjian Paul B.,** նշվ. աշխ., էջ 380, տե՛ս նաև Թեոդիկ, նշվ.աշխ., էջ 245:
[17] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժ. 3, գ. 35, թ. 1:
[18] Էփրիկյան Հ. Ս.,Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1903-1905, էջ 83:
[19] **Kevorkian Raymond H., Paboudjian Paul B.,** նշվ. աշխ., էջ 380:
[20] Արևելք, Կ. Պոլիս, 13.IV.1889:
[21] Նույն տեղում:
[22] Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 238, **Kevorkian Raymond H., Paboudjian Paul B.,** նշվ. աշխ.,էջ 380:
[23] Փոլատյան Ա., Պատմություն Հայոց Արաբկիր, Նյու Յորք, 1969, էջ 117:
[24] Քեչյան Ա., Ակն և Ակնցիք, Փարիզ, 1952, էջ 73:
[25] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժ. 3, գ. 35, թ. 2:

1895 թ. շատ ընտանիքներ գաղթել էին Պոլսի Սկյուտար և Կետիկ Փաշաթաղամասերը[26]: 1914 թ. գյուղի հայերի թիվը կազմում էր 250 տուն՝ 1260 շունչ[27]: Սաղմկա գյուղում ևս µYակություն էին հաստատել հայեր,որոնց ընդհանուր թիվը 1914-1915 թթ. կազմում էր 36 տուն՝ 279 շունչ[28]: Կարուշլան XX դ. սկզբին ուներ խառը բնակչություն, և հայ բնակչության թվաքանակն այստեղ կազմում էր 50 տուն[29]: Եվ եթե յուր աքանչուր տան շնչերի միջին թվաքանակն ընդունենք 8, ապա գյուղն ունեցել է մոտ 400 շունչ հայ բնակչություն:

Այսպիսով, Ակն կազայի այս հատվածում XX դ. սկզբին, նախքան Մեծ եղեռնը, µYակվում էր մոտ 4553 շունչ հայ:

Եփրատի ձախափնյա Շրզու, Վանք, Մուշեղկա, Զորակ գյուղերի հայ բնակչությունը դավանանքով կաթոլիկ էր: Շրզուում եղեռնի նախօրյակին µYակվում էին 320 շունչ կաթոլիկ հայեր[30]: Կաթոլիկ գյուղերի մեջ ամենանշանավորը Վանքն էր: 1892 թ. գյուղն ուներ 50 տուն հայ բնակիչ[31]: 1895-1896 թթ. կոտորածները և բնակչության արտագաղթն իրենց կնիքը թողեցին նաև Վանք գյուղի հայ բնակչության վրա. Արդեն 1914 թ. գյուղում բնակվում էր ընդամենը 150 շունչ կաթոլիկ հայ[32]:

Զորակում 1878 թ. բնակվող կաթոլիկ հայերի թիվը հասնում էր 154 շնչի, մինչդեռ թուրքերինը կազմում էր ընդամենը 66 շունչ[33]: Այս գյուղում, թեև շատ քիչ քանակով, բայց բնակություն էին հաստատել նաև լուսավորչական դավանանքի հայեր: 1878 թ. նրանց թիվը կազմում էր 3 տուն՝ 18 շունչ[34]: 1895-1896 թթ. կոտորածներից մազապուրծ հայերն ապաստան էին գտնում Կ.Պոլսում և այլուր, ու դրա հետևանքով XX դ. սկզբին գյուղում հայերի թիվը կիսով չափ պակասել էր՝ կազմելով 70 շունչ[35]: Մուշեղկայում 1878 թ. բնակվում էր կաթոլիկ 118 հայ[36]: Նույն ժամանակ գյուղում բնակություն էին հաստատել նաև լուսավորչական դավանանքի հայեր՝ 1 տուն (6 շունչ): Արտագաղթը և կոտորածները ևս այս գյուղում հավանաբար տեղ էին գտել. 1914 թ. գյուղում ապրում էր 164 հայ[37]:

Այսպիսով, Ակն կազայում կաթոլիկ հայ բնակչության թիվը XX դ. Սկզբին կազմում էր 704 շունչ:

Լիճք հայաµYակ գյուղը, 1882 թ. տվյալներով, ներառում էր 130 տուն, որից 2/3-ը (մեր հաշվարկով՝ մոտ 86 տուն)՝ հայ, իսկ 1/3-ը (մեր հաշ -

---

[26] Քեչյան Ա., նշվ. աշխ., էջ 74:
[27] Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 243, **Kevorkian Raymond H., Paboudjian Paul B.,** նշվ. աշխ.,էջ 380:
[28] **Kevorkian Raymond H., Paboudjian Paul B.,** նշվ. աշխ., էջ 380;
[29] Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 243, **Kevorkian Raymond H., Paboudjian Paul B.,** նշվ. աշխ., էջ 380:
[30] **Kevorkian Raymond H., Paboudjian Paul B.,** նշվ. աշխ., էջ 380:
[31] Ճանիկյան Յ.Կ., նշվ. աշխ., էջ 55, տե՛ս նաև Քեչյան Ա., նշվ. աշխ., էջ 121:
[32] **Kevorkian Raymond H., Paboudjian Paul B.,** նշվ. աշխ., էջ 380:
[33] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժ. 3, գ. 35, թ. 2:
[34] Տե՛ս նույն տեղում:
[35] **Kevorkian Raymond H., Paboudjian Paul B.,** նշվ. աշխ., էջ 380:
[36] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժ. 3, գ. 35, թ. 2:
[37] **Kevorkian Raymond H., Paboudjian Paul B.,** նշվ. աշխ., էջ 380:

վարկով՝ մոտ 43 տուն)՝ մահմեդական[38]: Եթե յուրաքանչյուր տան անձերի միջին թվաքանակն ընդունենք 8, ապա հայերը գյուղում մոտ 688 շունչ էին: Փաստերի բացակայությունը մեզ թույլ չի տալիս նշել, թե արդյո՞ք այստեղ եղել են արտագաղթ և 1890-ական թթ. կոտորածներ: Սակայն քանի որ 1914-1915 թթ. գյուղի հայ բնակչությունը 80 տուն էր[39] (ընդունելով յուրաքանչյուր տան ծխերի միջին մեծությունը 8՝ մեր հաշվարկով կազմում է 640 շունչ), պետք է ենթադրել, որ ժողովրդագրական տեղաշարժերը գյուղում առկա են եղել, և, փաստորեն, հայերի թիվը XIX դ. վերջին ոչ միայն չէր ավելացել, այլև XX դ. սկզբին նվազել էր մոտ 40 շնչով: Վաղաշեն հայկական գյուղում եղեռնի նախօրեին կար 56 տուն հայ բնակչություն[40] (մեր հաշվարկով՝ մոտ 448 շունչ): Բինկյան (Բինկա,Բենկա) գյուղում հայերը XIX դ. վերջին թվով գերակշռում էին թուրք երին (50 շունչ) (1878 թ. հայերի թիվը կազմում էր 170 տուն՝ 980 շունչ)[41]: Համիդեական ջարդերից առաջ հայերի թիվն աճել էր՝ հասնելով 200 տան[42]: Այդ կոտորածները ծանր էին անդրադարձել գյուղի հայ բնակչության վրա: Գյուղը հրդեհվել էր, իսկ հայերից շատերն արտագաղթել էին, և 1915թ. գյուղն ուներ 140 տուն հայ բնակիչ (մեր հաշվարկով՝ մոտ 1120 շունչ):

Այսպիսով, Եփրատ գետի ձախափնյա հայկական գյուղերի հայ բնակչության թիվը նախքան Մեծ եղեռնը կազմում էր 2912 շունչ, որից 704-ը՝ կաթոլիկ դավանանքի: Ոսկեգետակի ափին գտնվող գյուղերից Քուշնան հայաբնակ էր, որտեղ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին կար 150 տուն հայ[43] (մեր հաշվարկով՝ մոտ 1200): Ծապլվարում նույն ժամանակ հայերը սակավաթիվ էին՝ ընդամենը 16 շունչ[44]: ՀայաµՅակ Ծագ գյուղը XIX դ. վերջին ենթարկվեց ժողովրդագրական տեղաշարժերի, և ըստ ականատեսն երի՝ տուն չկար, որտեղից հայերը չգաղթեին այլ երկրներ[45]: Փաստերի և տեղեկությունների սակավությունը մեզ թույլ չի տալիս ճշտելու հայերի թիվը նախքան արտագաղթը և գյուղի կրած փոփոխությունները՝ կապված այդ արտագաղթի հետ, µայց կարող ենք ասել, որ XX դ. սկզբին Ծագը շարունակում էր հայաբնակ մնալ, քանի որ 1914 թ. այստեղ կար 82 տուն՝ 687շունչ հայ[46]: Հասկնի գյուղը 1895 թ. առաջ ուներ 30 տուն µՅակչություն, որից 25 տունը՝ հայ, 5-ը՝ թուրք[47]: Դարավերջի ոճրագործությունը ծանր անդրադարձ ունեցավ նաև այս գյուղի վրա: 1914 թ. գյուղում հայերի թիվը նվազել էր՝ կազմելով 14 տուն՝ 70 շունչ[48]:

---

[38] *Մասիս, Կ.Պոլիս, 27.VIII.1882:*
[39] Թեոդիկ, *նշվ. աշխ., էջ 244:*
[40] *Տե՛ս նույն տեղում, էջ 238:*
[41] *ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժ. 3, գ. 35, թ. 2:*
[42] Թեոդիկ, *նշվ. աշխ., էջ 244:*
[43] Բախտիկյան Ս. Ա., *Արաբկիր եւ շրջակայի գյուղերը, Բեյրութ, 1934, էջ 134:*
[44] **Kevorkian Raymond H., Paboudjian Paul B.,** *նշվ. աշխ., էջ 380:*
[45] Բախտիկյան Ս. Ա., *նշվ. աշխ., էջ 134:*
[46] **Kevorkian Raymond H., Paboudjian Paul B.,** *նշվ. աշխ., էջ 380, տե՛ս նաև* Թեոդիկ, *նշվ.աշխ., էջ 238:*
[47] Փոլատյան Ա., *նշվ. աշխ., էջ 130:*
[48] **Kevorkian Raymond H., Paboudjian Paul B.,** *նշվ. աշխ., էջ 380:*

Նախքան Մեծ եղեռնը Խոռոչ* գյուղն ուներ 30 տուն, որոնցից 21-ը՝ հայ, 9-ը՝ թուրք[49]: Յուրաքանչուր տան շնչերի միջին թիվն ընդունելով 8՝ կստանանք 168 շունչ: Այս գյուղերից Ծապլվարն ուներ ամենասակավաթիվ հայ µYակչություն. 1915 թ. սկզբին այն ուներ 16 շունչ հայ[50]:

Կռանի գյուղում ևս հայ բնակչության արտագաղթը տեղ էր գտել XIX դ. վերջին և XX դ. սկզբին: Հայերը գաղթում էին Կ. Պոլիս և այլ քաղաքներ՝ պանդխտության: Դրան գումարվեցին նաև 1890-ական թթ. Կոտոր ածները, որոնք ևս խեղաթյուրեցին ողովրդագրական պատկերը: Առաջին համաշխարհային պատերազմի նախաշեմին Կռանիում բնակվում էր 20 տուն հայ[51] (մեր հաշվարկով՝ մոտ 160 շունչ): Էհնեցիկ հայկական գյուղում նույն ժամանակ հայերի թիվը հասնում էր 231 շնչի (26 տուն)[52]: Այսպիսով, մեր հաշվարկների համաձայն, Ոսկեգետակ գետի ափին բնակվող հայերի թիվը XX դ. սկզµCY, նախքան Մեծ եղեռնը, մոտ 2548 շունչ էր:

Ընդհանրացնելով նշենք, որ XIX դ. վերջին և XX դ. սկզբին Ակնի կազան Արաբկիրի սանջակի հայաշատ գավառակներից էր, որտեղ 1914-1915 թթ. ընթացքում բնակվում էր մոտ 15.525 շունչ հայ:

АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ КАЗЫ АК

(конец XIX- начало XX вв.)

Резюме

В конце XIX вв. каза Акн являлясь северной казой Арабкирского санджака . На севере каза Акн граничила с Себастийским и Каринским вилайетами,на востоке – ц Дерсимским санджаком, на юге – с Арабкирской казой ,а на западе – с Себастийским вилайетом. В основном армянское наследие казы Акн проживало в этом городе ,а также в деревнях найие Ахн. В 1914-1915 гг. в казе Акн проживало около 15.525 армян, из которых 7720 человек – в городе Акн.

---

* *Խոռոչ գյուղի անվանումը համապատասխանում է դիրքին, քանի որ վերջինը գտնվում է չորս լեռների ստորոտին:*

[49] Փոլատյան Ա., *նշվ. աշխ., էջ 130:*

[50] *50* **Kevorkian Raymond H., Paboudjian Paul B.,** *նշվ. աշխ., էջ 380:*

[51] Բախտիկյան Ս. Ա., *նշվ. աշխ., էջ 137:*

[52] **Kevorkian Raymond H., Paboudjian Paul B.,** *նշվ. աշխ., էջ 380, տե՛ս նաև* Թեոդիկ, *նշվ. աշխ., էջ 238:*